Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1946

1999

ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՔ,

ՈԳԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՀԵԳԻՆԱԿ

Գ. ԱՐՊԻՍ ՍԻՐՕՅԻ ՎԱՆԱՆԴԵՑՒՆ

ԼԷՔ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՌՑԺԲ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1863

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԷՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

կամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐՔ,

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՁՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՀԵՂԻՆԱԿ

Պ. ՍԱՐԳԻՍ ՄԻՐՕՂԼ ՎԱՆԱՆԴԵՑԻ

ԱՆԴԱՄ

ՀԱՇՏԵՆԻՑ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆԵՐԿԱՅԱՑԵԱԼ ՅԱՌԱՋԻՆ ՆՈՒԱԳ

Ի 16 ՅՈՒՆԻՍԻ 1861

Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՏԵՐՈՒՄ

ՕՄԻՒՈՆՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿԱՆ ՍՍՀ
ԳԱ Մեսրոպյան անվան ձեռագրատուն

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1863

41946.60

28 1953

Բ.Օ.Գ

Այն Ողբերգութիւնը թէև առաջին անգամ 1858 թն սկիզբը Փարիզի մէջ տպուեցաւ, այլ գրեթէ բոլորովին անտես մնաց հասարակութենէ, իբր ընդ գրուանաւ ծածկուած մնալուն՝ և հետեւաբար ձեռքերնիս չ'անցնելուն համար։ Այս անգամ որբոյ Երուսաղէմի Ազգասէր Մխիթարեանէն Հայց Գերապատուութեանց համահաճ հաւանութեամբ և յատուկ խնդրանօք վերատին 'ի լոյս կ'ընծայուի կարեւոր փոփոխութեամբ՝ որ ներելի է անշուշտ հնգօրեայ աշխատութեան մի վերայ՝ 'ի 26 Օգոստոսի 1857, զոր և անմիջապէս մտոնոյ յանձնելու. սոխորուած էինք քան խնդքոյ Տառեան Ազնուաշուք և Ուսումնասէր Գերսէս Էֆէնտիի։

ՄԵԾԻ ՆԵՐՍԷՍ

ՈԴԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՆՁԻՆՔ

Ա. ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ.
Բ. ԹԷՈԴՈՍ, Հայոց Յոյնոց.
Գ. ՊԱՊ, Լաւագոյն Հայոց.
Դ. ՋԱՐՄԱՆԴՈՒԽՏ, Հին Պապոյ և Լաւագունի Հայոց.
Ե. ԱՐՇԱԿ, Ողջի Պապոյ.
Զ. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ } Ղըրվեարդ Հայոց.
Է. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ }
Ը. ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ, Ղըրվեար Յունոց.
Թ. ՄԵՐՈՒԺԱՆ, Մոպնիչ Հայրենեաց.
Ժ. ԳԱՒԱՆ, Հաստատիմ Ոեծն Ներսէսի.
ԺԱ. ՎԱՂԱՐՇ, պաշտօնական Պապոյ.
ԺԲ. ԿՈՍՏԱՆԴ, պաշտօնական Տերենտիանոսի.

Քիւռորներ, Պահապաններ։

Առաջին և երկրորդ Արարածները Պօղոյ Ոչ Թէոդոս կոյսէր պաղատը. Երրորդը Հայասպանի Ոչ Զէրա դաղտը. Չորրորդը Հայասպանի Ոչ Պապոյ պաղատը։

ՄԵԾԻՆ ԴԵՐՄԱՅՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՔ.

ԱՌԱՋԻՆ ԱՌԱՔՅԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԴԵՐՄԷՍ ԵՒ ԳԱՒԱՌ

Դերմէս ամուսէ մը վրայ կ՚ենջէ. Գաւառն կ՚մտնէ յեռուքը նամակով։

ԳԱՒԱՌ

Տէր իմ, Հայաստանէն նամակ ունիք։

Ո՛ւրմանալի բան, այս ժամանակս երբէք քնացած չ՚էր. պէտք եմ զայն արթնցընել... բայց չէ՛, գուցէ հանգստութիւնը արգելք կ՚ըլլամ։

Ա՛վ քուն, մարդիկ զքեզ իրենց հանգիստը կ՚անուանեն, բայց ես կ՚ըսեմ որ կ՚սխալին. որովհետեւ քու կերպարանքդ ալ տակալի է, դուն ալ գրեթէ մահուան չափ ազդեցութիւն կ՚ունես մարդկային սրտի մը...։

Այս պատկառելի դիմաց վրայի կնճիռը ինչի՞ նշան է, ուսկից կ՚պատճառի այս կերպարանաց վրայի տրտմութեան գիծերը, եթէ ոչ երեւակայութենէ. և այս երեւակայութիւնը ինչ տեսն մարդուս վրայ կ՚բռնանայ, գիշերը՝ ինչ տեսն հարկաւորութիւնը բնութեան կ՚հնազանդի։

Ուրեմն ոչ է այն մահկանացուն՝ որ քունը հանդիսա կ'անուանէ. Թող գայ տեսնէ, ահա քունէն պատճառուած հանդուրժելիները. այնպիսի հանդիսաութիւն մը՝ որ իմ սրբոյ Հայրապետս տրամաբեան ու վարանց Ովկիանոսներու մէջ կ'թափառեցնէ, այնպիսի հանդիսաութիւն մը՝ ոհ տեսէք, որ Տիրոջս ծնօտներէն արտասուաց կաթիլներ կ'հոսեցնէ։

Ես չեմ կրնար համբերել, այնչափ անդութ չեմ ելլար՝ որ թողում իմ Տէրս երեւակայութեան ճիրաններուն տակ աւելի եւս նեղուի... արթնցնեմ զայն, բայց... արթնցնեմ ու վախճան մը տամ իւրեն այս տառապեցուցիչ երազներուն... չէ՛ ես չեմ արթնցներ, ահաւասիկ ինք կ'շարժի, այո՛ կ'արթնայ։ (Ներսէս կ'արթննայ)

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաւա՛ն

ԳԱՒԱՆ

Տէ՛ր իմ

Ս. ՆԵՐՍԷՍ

Ո՞ւր էիր

ԳԱՒԱՆ

Ամէն ժամ է որ Ձեր շարժուածները կ'դիտեմ Տէ՛ր իմ, բայց չ'համարձակեցայ արթնցնել։

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաւա՛ն, Հայրենեացս վրայ չարագուշակ երազներ տեսայ. յիրաւի երազներու ակնոջ չ'եմ կախեր, բայց այս կերպ երազները շատ անգամ ըստուգուած են. ո՞ւր էր որ Հայաստանէն տեղեկութիւն մը առնէի։

ԳԱՒԱՆ

Տէր իմ, Հայաստանէն նամակ ունիք, ահա՛ սատիկ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ապրիս, որ ինձ ուրախութեան պատճառներ կ'հաղորդես։ Դիտես որ աքսորէն դառնալէս 'ի վեր ինչպէս կ'փափաքիմ Հայրենեացս վրայ տեղեկութիւն մը ունենալ։ (Բանալու պէսպէսով) Ե՞րբ եկաւ։

ԳԱՒԱՆ

Իմ ձեռքս անցնիլը հաղիւ մէկ ժամ կայ, Տէր իմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Բարի, ո՞վ տուաւ քեզ։

ԳԱՒԱՆ

Կայսրը իր ձեռքով։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրիշ բան բան։

ԳԱՒԱՆ

Ա՛յ, բայց իր կերպարանաց վրայ տրամութիւն մը կ'տիրէր. նամակը ինձ յանձնած ժամանակ և ոչ անգամ բաւ՝ որ այս քու Տիրոջդ կամ Սրբազանին տուր. բայց միայն դէմքը տխուր կերպով մը շարժելով ինձ հասկցուց։

Ս. ՆԵՐՍԷՍ

Դաւա՛ն, արդէօք ինքը բարկացնելու առիթ մը տուա՞ծ է։

ԳԱՒԱՆ

Ձէ՛ Տէր իմ, ամենեւին մանաւանդ գիտէք թէ անոր սիրելի եմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Միտքս ուրիշ կասկած մը կ'ընէ։

ԳԱՒԱՆ

Ի՞նչպէս։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հայտնանէն իրեն ուղղուած ուրիշ նամակ կա՞ր։

ԳԱՒԱՆ

Այո՛, ձեռքին մէջ ուրիշ նամակ մի ալ տեսայ բացուած։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրեմն ճիշդ է կասկածս, իրեն տրտմութեան պատճառը այս նամակը եղած պիտի ըլլայ. այս նամակը՝ որ վախնամ դիս ալ պիտի տրտմեցնէ . . . Տէր Աստուած, ի՞նչ պիտի կարդամ արդեօք այս նամակին մէջ։ (Խոյն բանալով) Ա՜հ, սիրոս վրայ չ'երթար թաղ կարդալու . . . ։

Ի՞նչ աղետալի լուրեր . . . ախտա՜ . . . ո՜հ, ալ չ'եմ կրնար կարդալ, ալ չ'եմ կրնար ինքզինքս բռնել և չ'ողբալ Հայրենեացս աղիողորմ թշուառութեանց վրայ։ Իմ աքսորանացս մէջ յիրաւի շատ դժբաղդութեանց պատահեցայ, ալեկոծութենէ նեղուեցայ, մոհուան կէտը հասայ, օտար անծանօթ ու վայրենի գազանների մէջ ապրեցուն երկրի մը մէջ թափառեցայ, անօթի՝ ծարաւ՝ անքուն և անօգնական մնացի, բայց

ասոնք ամէնն ալ զիս այնչափ չ'վշտացուցին, որչափ որ Հայաստանի հիմակուան ողբալի վիճակը։

Ով դժբաղդ Հայրենիք, այս կերպ պիտի լսէ ուրեմն քու վրայօքդ. այս օրինակ Հայրենասէրց զաւակները պիտի ունենայիր՝ որ զքեզ կործանելու ու հիմնայատակ ընելու կ'ջանան։ Սիրաս կ'ողբայ՝ որ ազգաբնակութիւնը նախանձու ակռաներու տակ կ'ճնշի։

Հայաստան աշխարհ, կորանցուցիր դուն ալ քու եռանդուն ոգիդ, ափսո՜ս։ (Հերոսէս Ղ'Երիայ)

ԳԱՒԱՌ

(Երիալը— վրայ) Ի՞նչ նոր աղէտ արդեօք գտնուեալ Հայաստանի մէջ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ա՞ռ կ'երթաս։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ, կայսեր հրամանը կատարելու։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ հրաման ունիս կայսրէն։

ԿՈՍՏԱՆԴ

Պատուիրեալ՝ որ մէկը չ'մտնէ իւր սենեակը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ պատճառաւ։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ, պատճառը չեմ գիտեր. միայն թէ ինձ սանկ պատուիրեց, և ստիպուած եմ անոր հրամանը կատարելու։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ուրիշ մէկը կայ քովը։

ԿՈՍՏԱՆԴ

Առանձին է Տէր իմ, և առանձին կ'ուզէ մնալ ժամանակ մը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ընչու՞ պատճառ մը ունի առանձին մնալու. բայց դուն կամ չես գիտեր պատճառը, և կամ չի գիտնալ ձեւացընելու պատուիրուած ես։

ԿՈՍՏԱՆԴ

Ամենեւին Տէր իմ, միայն այսչափ տեղեկութիւն կրնամ տալ Ձեզ՝ որ այսօրուան կրած կերպարանքը տխուր կ'երեւի։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ կ'ըսես, արդեօք ի՞նչ առիթ ունի տրտմելու։

ԿՈՍՏԱՆԴ

Ինձ յայտնի չէ. բայց ներեցէք ինձ Տէր իմ, եթէ կայսեր հրամանը 'ի գործ դնելու կ'ուզեմ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

(Առանձին) Ասիկայ ինձ զարմանք կ'պատճառէ։

Տէրութիւնը բոլորովին խաղաղութեան մէջ կ'գտնուի. նախարարաց և իշխանաց մէջ խռովութիւն մի չ'կայ, պալատին մէջ անդորրութիւնը կ'տիրէ. ուրեմն ի՞նչ պատճառ կրնայ ունենալ տրտմելու։

Պալատին մէջ անշուշտ մէկը կ'գտնուի՝ որ Կայսեր տրտմութեան պատճառը գիտնայ. ուրեմն աճապարեմ այս բանիս տեղեկանալու։ (Կ'Երլոյ)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԳԱՒԱՌ, ՎԵՐՋԷՆ ՉԱՐՄԱՆԴՈՒԽՏ, ԵՒ ՎԵՐՋԷՆ ՊԱՊ, ՆԵՐՍԷՍ

ԳԱՒԱՌ

Գուժաբեր նամակ... քարէ սիրտ մը կ'ուզէ որ զայն կարդայ ու չ'հեծէ։ Ընշակ, Հայրենասէրաց թագաւոր. ո՞ւր էր որ քու այդ զեղխ կեանքդ քիչ մը յառաջ վերջանար. հիմայ Հայաստան այս օրինակ դժբաղդութիւններ դուցէ չ'էր կրեր։ Ո՞ւր էր որ Հայաստան քեզի պէս բռնաւորի մը երեսը բնաւ չէ տեսնէր։

Դուն մեռար, բայց քու պատճառածդ անիրաւութիւնները, զեղխութիւնը և թշուառութիւնները կենդանի թողուցիր։ Ներկայացիր ուրեմն հիմայ այն սհարկու թագաւորին առջեւ. ներկայացիր սարսափմամբ, ու գործած ոճիրներուդ՝ պատճառած խեղճութիւններուդ և անձնապանութեանդ ցուցակը, համարը և հաշիւը տուր։

Ընթամ Սրբազանը գտնեմ, նայիմ ի՞նչ վիճակի մէջ կ'գտնուի. խրատնք ունի եղեր՝ որ այս աստիճան սիրտը ցաւեցաւ. և ո՞ր Աղդատէր այս աղէտները լսելով չ'ճմլի...։

Խեղճ Հայաստան, բաղդակորոյս Տերութիւն, ցաւալի աշխարհ, որ երբեմն պերճ ու բարեկարգ թագաւորութիւն, կ'ողբամ ես ալ քեզի հետ քու թշուառութեանդ վրայ. կ'ողբամ, որ քու գեղեցիկ շէնքերովդ աւերակներու կոյտ դարձած ես։ Վա՜յ ախտա՜ս . . . ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

(Դրան առջեւ) Ի՞նչ ողբեր կ'լսեմ, և ո՞վ է ան . . . (յառաջ հոգայ) Գա՛ւառն, գա՛ւառն, դուն կուլա՞ս . . . դուն կ'ախտաս՞ս, և ի՞նչ է այդ հեծութեանդ պատճառը. ո՞ւր է տուրբ Հայրապետը, ո՞հ, սիրտս կ'տրտիվէ. խօսէ՛ գաւառն, ի՞նչ է պատահածը։

ԳԱՒԱՌ

Ոչինչ Տիկին

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Մի՞ պահեր ինձմէ գաւառն, քու բերնէդ Հայաստանի անունը լսեցի, անոր վրայ կ'ողբայիր դու. խօսէ՛ ուրեմն համարձակ, ի՞նչ է պատահածը, ի՞նչ է չարիքը՝ որու վրայ կ'ցաւիս. ի՞նչ է աղէտը՝ որու վրայ կ'ուլաս. խօսէ՛ գաւառն, ի՞նչ է ցանկալի Հայրենեաց կորուստը։

ԳԱՒԱՌ

Իւր փառքը, իւր պայծառութիւնը և խաղաղութիւնը։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ Երկինք, և ի՞նչպէս։

ԳԱՒԱՌ

Ներէ՛ ինձ Տիկին, ներէ՛ իմ լռութեանս՝ զոր դքեզ չ'վշտացընելու համար կ'պահեմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛Հ չէ, յառա՛ջ տար. թէ և տուած լուրդ դուժաբերը, թէ և իմ աղեքներս կ'խարշատէ, բայց պէտք ամ սիրելի Հայրենեաց վիճակը։

ԳԱՒԱՆ

Հայաստանի խաղաղութեան և սիրոյ արեւը մարեցաւ, Հայաստան հոգեվարքէ Տիկին...

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հայաստան հոգեվարքէ չէ... ի՞նչ եղաւ իւր Տէրութիւնը, ի՞նչ եղան նախարարները, ի՞նչ եղաւ Արշակ՝ որ Հայաստան հոգեվարքէ պիտի ըլլայ։

ԳԱՒԱՆ

Իւր Տէրութիւնը անգլուխ, նախարարներէն ամէն մէկը իր անձը կ'հոգայ, Արշակ Պարսից ձեռք անձնատուր ըլլալով ինքզինքը կ'ապանէ Անդուշ բերդին մէջ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ինքզինքը կ'ապանէ. Արշա՞կ, Անդո՞ւշ բերդին մէջ, ի՞նչ կ'խօսիս Գաւա՛ն։

ԳԱՒԱՆ

Ամէնուրեւ զիս ատիպեցիր Տիկին, թո՛ղ ուրեմն գիտցածներս ալ խօսիմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ գթած Երկինք։ (Աչքերը կ'գոցէ)

ԳԱՒԱՆ

Պարսիկք Հայրենեաց Մերուժանայ տակալի

անգթութեամբ ամէն տեղից գունդագունդ Հայաստանի մէջ կ'թափին ... Հոն՝ ուր կենդանութիւն կ'շողար, հիմայ մահը կ'տիրէ. հոն՝ ուր ժպիտ և ուրախութիւն տիրոր էր փայլել, հիմայ լաց և վայնասունք ամէն տեղից արձագանք կ'ուտան. տուրը իւր գլխուն վրայ, արիւնը իւր առքերուն տակ, և տոչորակէզ հուրը իմ ցանկալի Հայրենիքս անապատ կ'դարձնէ. ով թշուառութեան ...։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Լռէ՛ գաւան, լռէ՛ ... բայց ուսկից խնցարը դու, ով բերաւ այս գուժաբեր լուրը։

ԳԱՒԱՆ

Հայաստանէն երկու նամակներ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Որո՞ւ ուղղուած։

ԳԱՒԱՆ

Կայսեր և Սրբազանին։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ուրեմն Սրբազանը լսեց այս աղէտը։

ԳԱՒԱՆ

Այո՛ Տիկին, հազիւ հազ կրցաւ կարդալ նամակը, և տրտմութենէ ու կսկիծէն իւր սենեակը առանձնացաւ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ով թշուառութիւն, պատերազմութեան մէջ ա-

ուելի սատկութեամբ կ'հանիս, և մահուան զանգակի նման մարդուս սրտին խորը կ'զարնես . . . : Ընկնուր գաւան, տար զիս Սրբազանին քով. մխիթարեցնք զինքը, չ'թողունք որ ծերութեան մէջ այսպիսի դառն կսկիծ մը իւր առաջութեանը ապառնայ : Երկնից դթութեանը ապաւինինք՝ որ թշուառաց միակ պաշտպանն է, երթանք :

ԳԱՒԱՆ

Բայց կարծեմ Սրբազանը հոս կ'ուգայ, անոր ոտքին ձայնը կ'լսեմ :

ՉԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Այո՛ այն է, նաև գաղ ամոր հետ, բայց ի՞նչ ուրուտ և տխուր :

(Գաղ և Ներսէս կ'մտնեն :)

ԳԱԳ

Այս տարաբաղդ լուրը իմ արիւնս սառեցուց Սրբազան Հայր :

Ս. ՆԵՐՍԷՍ

Եւ Հայրենեաց արիւնը հատեցուց :

ԳԱԳ

Ո՞ւրմանդուխտ, Աղջակ հայրս . . . :

ՉԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ինքզինքը կ'սպանէ :

ԳԱՒԱՆ

(Հայրենեաց անդարդուելթիւնն ալ մէկտեղ :)

Ս. ԴԵՐՍԷՍ

Ահա անձնասիրութեան և ատելութեան պտուղը, որ աշխարհ մը կրնայ կործանել և ժողովուրդ մը աւերակներու վրայ թողուլ... բայց Հայաստանի մէջ այս երկուքն ալ. Հայաստան ատոնց ո՞հ ըլլայ, և իւր փառքը, պայծառութիւնը և խաղաղութիւնը հաստատուն է և վրդովէ։ Ո՛հ չէ՛, չէ քաղցրիկ Հայաստան, չէ հոխրակոծեալ տեղի, դուն այսպիսի ցաւալի վիճակի մը ենթակայ պէտք չ'ես ըլլալ։ Հայրենասէրց Մերուժան մը թէպէտ քու Վանքերդ և Եկեղեցիներդ հիմնայատակ կ'կործանէ, թէև քու թշուառ բնակիչներդ կ'հալածուին և կ'ջարդուին, բայց Աստուած մը, երկրպագելի Ստեղծող մը դքեզ անօգնական չի թողուր։ Այն կրակը՝ որ դքեզ կ'լափէ հիմայ, կարող է մարիլ և նոյն իսկ Մերուժանայ արեամբ...։

Իսկ դուք մի տրտմիք զաւակներս, Երկնից վրայ դնեցէք մեր յոյսը. թէև յոյս և ակնկալութիւն Հայաստանի տխուր աւերակներուն տակ կ'ծածկուին հիմայ։

ՊԱՊ

Նրթանք Սրբազան Հայր, ժամանակ է՝ որ Ձեր հաղորդիս հանձարոյն շուքերանը բանաք. ժամանակ է՝ որ Ձեր տաղանդաշատ բնաւորութեամբ այս աղէտներուն դարման մը տանիք։ Նա կ'ուզեմ Հայաստան դառնալ. ամէն մէկ վայրկեան հոս իմ կեանքս կ'մաշեցնէ։ Թէև իմ բազուկներս արիւն ուռած չեն, թէև պատերազմի պղպաղը տակաւին իմ աչքիս առջեւ շլացած չ'ուներ, բայց սիրտս վառ է միշտ Հայրենեաց սիրով. սիրտս և բազուկներս պատրաստ են միշտ նուիրել Հայրենեաց օգտին համար...։ Պիտի ուզեմ՝ քու թշուառ և

անարդ մահուանդ վրէժը, Հայր իմ Արշակ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հանդարտէ՛ Գաղ, սիրելի ամուսին, մի խռովիր։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, պիտի դառնաս Հայաստան, վրէժխնդիր պէտք ես ըլլալ քու թագաւոր հօրդ մահուանը. բայց աւելի շատ Հայրենեացդ վնասուն։ Արդէն Արշակ հօրդ մահը Հայրենեացդ օգտին համար չէր բնաւ. իւր անկարգ ընթացքը, իւր գէշ վարմունքն էր որ Հայաստանի խաղաղութիւնը՝ և շատ կեանքեր հետ մէկտեղ իւր կեանքն ալ կորսնցուց։

ԳԱՒԱՌ

(Կամարականերց և Գնեալց և ուրիշ անմեղներու արիւնը թափել տուաւ Արշակ։)

ԳԱԳ

Բայց Արշակ հայրս . . . ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Սպասէ՛ Գաղ, սասնկ նեղ տեղ մը մէջ և սասնկ կարեւոր գործ մը զայրութիւն չ'ակնկալիք, այլ խոհեմութեամբ։ Կը հրամայեմ Կայսեր ներկայանալու. անոր գութը շարժելու պիտի աշխատիմ, անոր օգնութիւնը պիտի խնդրեմ, որպէս զի Արշակ հօրդ տեղ գէթ Հայոց վրայ թագաւորեցընէ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Թագաւո՞ր Հայոց վրայ, ո՞հ ինչ ուրախութիւն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, թագաւոր Հայոց վրայ, բայց ո՛չ իբր Արշակ. այս միայն յիշէ պա՛պ, աւելի աղէկ է աղքատ և խոնարհ ատուճանի մէջ՝ քան իբրեւ Արշակ թագաւոր ըլլալ։ Բայց երթա՛նք, սիրտս լցուած է, և Հայրենեաց վիճակը ժամանակ կորսնցընելու չ՚նե՛ր։

ԳԱՒԱՌ

(Բարի վարքը և բարի անունը՝ երկրիս վրայ ամենէն մեծ թագաւորութիւն է։)

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿՐԳՈՅՈՒԹ։

Լ Ի Ր
ԳՐԱԳԱՐԱՆ



Hauptleitungen Bonnen Ostbulgte entgegen entfernt hat. (Epitu 28)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԱՑՍՐ · ՆԵՐՍԷՍ · ԿՈՍՏԱՆԴ · ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ · ՊԱՊ ·

ԿԱՑՍՐ

Յերաւէ սիրոս շատ ցաւեցաւ Հայաստանէ թշուառ կացութեանը վրայ, և կրնամ ըսել թէ իմ տրտմութիւնս ալ ձերինին կ'հաւասարի։

Ս · ՆԵՐՍԷՍ

Ընդհանրական ոչ-ոյ հաւասարութիւն է ատոնք ոչ մեծախուռ տէր · չ'եմ կրնար Հայրենեացս մէջ գտնուող անձնասէր մարդկան թիւը պակսեցընել, քանի որ ըրած գործքերնին յայտնի կ'վկայեն։

Ընփոփս, որ Հայաստան այսպիսի հայրենասէց անձերու զոհ կ'ըլլայ · ծերութեանս մէջ այս ամենէն մեծ վիշտը պիտի ըլլայ եղեր, որ իբր անյոյզ ցեց իմ կեանքս մաշեցընէ . . . ։ Խրէ՛ տրտմուացս ո՛ խաղաղասէր Իշխանդ, որոնք հայրենասէր աչքերէ կ'բղխին։

ԿԱՑՈՒՐ

Հանդարտեցէք ո՛ Սրբազան Հայր, տրտմութեան և վիշտերու մէջ չ'յուսահատիլը եւ ձեզմէ պէտք եմ տրվիլ · սեզի տուէք այդ տրտմութեան՝ որ թէպէտև արդարացի է, բայց ալեւորեալ հասակնուդ վնասակար։ Գաջալերուեցէք, զի թասիրա ոչ ինչ տալիս կ'գտնուին . . . Հանդարտեցէք կ'ըսեմ, տրտմութեան ախտը վտանգաւոր է, որուն ազդեցութիւնը եւս ալ կ'զգամ։ Շատ անգամ Ձեր ազգու

խօսքերը լսած եմ, որոնք տրտմութեան ու ցաւոց համբերութեամբ տանելու համար՝ ազգու քաջալերիչներ էին։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ձեր վեհափառութեան անզուգական սիրոն է՝ որ կ'ստիպէ զձեզ այս կերպիւ Նուաստս հետ վարուելու. բայց արդ՝ խօսեցէք ինձ, ի՞նչպէս չ'տրտմիմ՝ որ Հայրենիքս անդունդէ անդունդ գահավիժելու կէտը հասած է. ի՞նչպէս չ'տրտմիմ ու չ'ցաւիմ։ Դատեցէք ուրեմն և ես կ'հնազանդիմ Ձեր տուած իրաւունքը։

Ես ճարտարախօսութիւն չ'ունիմ, բնական հանճար ամենեւին. հապա որոնք եղած խօսքերն են՝ որ անկեղծութեամբ կ'խօսիմ։ Ձեր ազնիւ սիրտը գրգռելու ու շարժելու համար կարող չ'եմ պերճ ու զարդարուն խօսքերով ատենաբանութիւններ ընել. բայց միայն Ձեր վեհափառութեան աչքին առջեւ կ'ներկայացնեմ Հայաստանի շինուածոց ու պարտէզներուն տխուր աւերակները։ Դարձուցէք անդամ մը Ձեր քաղցր ու բարեգութ հայեցուածքը հոգեվարք Հայաստանի վրայ, որուն մթնոլորտը կարմրերանգ արեան գոյն առած է. ասոնք Ձեզ կ'ներկայացնեմ, այս կերպիւ կ'խօսիմ, որ ոչ չափազանցութեամբ է և ոչ բնական հանճարով։

Պարսիկք իրենց անգութ սուրերով ամէն տեղ կ'աւրեն ու անապատ կ'դարձնեն. Գաւիքերը ու եկեղեցիները հիմնայատակ ըրած են, ու մէջի եղած բոլոր արարողութեան Ցուռարէն գիրքերը Սերուժանայ ձեռքով այրած, կրօնքը մեծ վտանգի մէջ է, ո՛ մեծախառ Տէր։ Հրապարակաց և արուարձաց մեհեանները օրէ օր կ'շատնան. անմիւս անձեր Քրիս-

տունէութեան համար կ՚զոհուին, և Հայաստանի մէջ մէկը չ՚կայ՝ որ այս ամենուն դարման տանի. ո՛չ թագաւոր, ո՛չ նախարար և ո՛չ ժողովուրդ. ամէն մէկը մէկ մէկ կողմ ցրուած են։ Ընչակ թագաւորը Պարսից ձեռքը անձնատուր ըլլալով, Անդուշ բերդին մէջ ինքզինքը կ՚ապանէ. նախարարներէն ոմանք Պարսից կողմը կ՚անցնին, և ոմանք ուրիշ ամրութիւններու մէջ կ՚ապաստանին. ժողովուրդը անօրէն ձեռքերէ կը զոհուի։ Ո՜հ, այս ամէնը մօտալուտ կործանման մը նախադուշակութիւններն են։

Կարծես թէ Հայաստանի աւերակներէն ձայն կը կանչեն, ինձմէ օգնութիւն կ՚խնդրեն։ Ո՛վ իմ դըժբաղդ Հայրենիքս, և դուք տառապեալ զաւակներս. ինչպէս կրնամ ձեզի օգնել, քանի որ ես ինքս օգնութեան կարօտ եմ։ Մի հեծէք, մի հառաչէք, Աստուած իր արտասուքները երեսէ չ՚ձգեր. բայց աւելի աղէկ կ՚ընէք՝ որ ձայն օգնութեան կանչելնուդ տեղ, Նորին վերհաւատութեան օգնութիւնը խնդրէք։ Խնդրեցէք և չ՚ձանձրանաք. աղաչեցէք ու անոր բարեդութիւնը սիրտը կ՚ձգիչանի. Նախախնամութենէ եաթը ձեր երկրորդ ապաւէնը անիկայ է. ցուցուցէք անոր ձեր կիսաբաց վէրքերը, վերուցէք գլուխնիդ փլատակներուն տակէն, և ձեր հեւազ ու անզօր հառաչանքը և հեծութիւնը . . .։

ԿԱՑՍՐ

(Ընդմիջելով) Դաւակն է, բաւական է . . . . . .

(Քիչ մը ժամանակ երկուքին ալ աչքերնին կ՚գոցեն։)

ԿԱՑՍՐ

Ինչպէս այս թշուառութենէն դարման կրնայ տարուիլ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Իմ միայն բաղձանքս այս է, և ասով գալիք չարութեանց առջեւը կրնայ առնուիլ, որ Արշակայ որդին Պապը Հայոց վրայ թագաւոր կարգելու շնորհք ընէք։

ԿԱՅՍՐ

Որովհետեւ այսպէս կ'ուզէք, կատարուի Ձեր բաղձանքը. բայց յիշեցէք որ Արշակայ որդին է։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ա՛վ Երկինք, այս իսկ է որ իմ բոլոր մտադրութիւնս կ'գրաւէ։)

(Կոսպանդ կ'մտնէ։)

ԿԱՅՍՐ

Շուտով Տերենտիանոս զօրավարը ինձ խրկէ՛։

(Կոսպանդ կ'դիմէ։)

Ընտիր եղիք Հայր Սրբազան, քիչ ժամանակէն ամէն բան կարգի կ'մտնէ, և ձեր տրտմութիւնները ուրախութեան կ'փոխադրուին. և ես կ'փափաքիմ միշտ որ զձեզ ուրախութեան վիճակի մէջ տեսնեմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այդ փափաքը գործքով ալ ցոյց տուէք վերհաստատ Տէր։

ԿԱՅՍՐ

Ես ասով իմ պարտքս կատարեցի և ոչ ուրիշ բան մը։

(Տերենտիանոս կ'մտնէ։)

Տերենտիանոս զօրավար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Տէ՛ր իմ։

ԿԱՅՍՐ

Ընդհանրական զօրութիւն մը կ՚ուզեմ քեզմէ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ձեր բարձր հրամանը կատարելու պատրաստ եմ միշտ, վեհափառ Տէր։

ԿԱՅՍՐ

Հռոմը բաւական ուժով Արշակայ որդին Պապը հեռդ առած՝ Հայաստան երթաս, ու զայն թագաւորեցընես բոլոր Հայոց վրայ. անկէց վերջը թշնամին բոլորովին վանես Հայաստանի սահմաններէն, և ամէն բան կարգի դնես յաջողութեամբ. պիտի կրնաս ատոնք ընել։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Վեհափառ Տէր, այդ բաներդ ընելու համար՝ մի միայն Ձեր հրամանը և Ղափանամութեան օգնութիւնը կ՚պակսի։

ԿԱՅՍՐ

Իմ հրամանս արդէն ատացար, և Ղափանամութեան օգնութիւնն ալ ատրբ Հայրապետին աղօթիւքը կրնաս ատանալ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, իմ սրտանուէր աղօթից, իմ արտասուախառն աղաչանաց յուսամ կ՚լսէ Երկինք, և կ՚շնորհէ իւր օգնութեան ձեռքը. քաջաբազուկ զօրապետ մի՝ որ թշնամացեալ ժողովուրդ մը և երկիր մը ազատելու կ՚դիմէ։

ԿԱՑՍՐ

Ընտրակոյս եմ։ Տերենտիանոս զօրավար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Տէր իմ։

ԿԱՑՍՐ

Պապը ինձ խրկէ։

(Տերենտիանոս ի՛մ ինի։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ընդունելի են ինձ, մանաւանդ Հայրենեացս ցոյց տուած մարդասիրութիւնդ, ոչ գիտնաս թէ-խանդ. Հայաստան աշխարհը՝ որ բարձր ապառաժի մը մինչեւ ծայրը հասած, իրեն առջեւի կորտեան խորափոր ու անելանելի անդունդին մէջ գահավիժելու կ'մօտի, դուք օգնութեան ձեռք կ'կարկառէք և կ'պաշտպանէք զայն գիշատիչ առիւծներու կատաղութենէ։ Ոչ անդնդարիներ երախտեաց. ես չ'եմ կրնար ըստ արժանւոյն երախտապարտ պտոյտ անկեղծ զգացմունքը յայտնել։ Թո՛ղ Հայրենեացս տխուր աւերակները արեգական ճառագայթներէն զուարթանան, և նոր Հռոմմայ ու անոր մարդասէր Ինքնակալին առջեւ շնորհապարտութեան սուներներ տարածեն։ Թո՛ղ Հայաստանի թշուառացեալ վիհասերուն ժողովուրդը՝ զուարթ դէմքով լերեւ յայտնի և արտաքին հաւատիք, իւր արտասուաթոր աչքերէն երախտապարտութեան կաթիլներ հանելնէ։

ԿԱՑՍՐ

Թո՛ղ Հայաստան այդ երախտապարտութեան նշանները արժանաւոր մէկու մը յայտնէ։ Խարիք

գործելը մարդուս պարտաւորութիւնն է, Սրբազան Հայր. եթէ ասիկայ ալ բարիք կրնայ սեպուիլ, իմ մեծ ուրախութիւնս այն է՝ որ երախտիք ճանչցող Ազգի մը կ՚ընեմ։ Ձեր բոլոր առաջարկութիւնները՝ որոնք Հայրենեացդ օգտակար էին, ընդունեցի. մի միայն Հայաստանի սիրոյն, և Ձեր վրայ ունեցած հաւատարմանս համար. բայց և ես առաջարկութիւն մի ունիմ ընելիք, և չ՚եմ ուզեր որ և ո՛չ մէկ կերպիւ ընդդիմանաք։

Ս. ՆԵՐՍԷՍ

Կ՚ընդունիմ, երբ Ձեր վեհափառութիւնը կ՚առաջարկէ, և Հայրենեացս վնասակար չէ։

ԿԱՑՍՐ

Ո՛ւ ժամն Հայրենեացդ օգտակար իսկ է։

Ս. ՆԵՐՍԷՍ

Երբ օգտակար՝ ընդունիլ իմ պարտքս է։

ԿԱՑՍՐ

Դուք ամէնքդ ալ կրնաք Հայաստան երթալ, Նոյնպէս և Պապ՝ իբրեւ Թագաւոր Հայոց վրայ։ Այս այս բանիս համար ի՞նչ օգնութիւն որ իմ ձեռքովս կրնայ ըլլալ, արդէն ձեզի կ՚նուիրեմ. բայց Պապայ ընտանիքը չ՚եմ Թողուր որ ձեր հետ Հայաստան դառնայ. այլ պիտի պահեմ հոս իբրեւ պատանդ՝ Թագաւորական ընտանիքի արժանի եղած պատուով։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաճէ՛ վեհափառ Տէր, ամբողջ ուրախութիւն մի երկուքի չ՚բաժնել։

ԿԱՑՍՐ

Որովհետեւ առաջին անգամն է ծանր կ՚երեւի ձեզ այս առաջարկութիւնը, և կ՚ուզէք ընդդիմանալ անոր, ուստի իմ պատճառներս յայտնեմ՝ որով դուք ալ համոզուիք։ Արշակայ բռնած ընթացքը զիս կ՚վախցընէ որ դէշ օրինակ մը ձգած չ՚ըլլայ իւր ետեւանդուտ տղուն. ուստի պէտք է ասանկ պարագայի մէջ մոռնամունք մը թողուլ անոր հետ, և սահման մը դնել անոր առջեւ. ուսկից անցնելու առեն մոռնէ միշտ՝ թէ իւր ընտանիքը պատանդ է իմ քովս։ Իւր երաշխաւորութիւն մը իւր թագաւորութեան, իւր ընտանիքը իմ պալատիս մէջ պիտի պահեմ։ Ինչպիսի՞ ինքն ալ կ՚ուզայ։

Ս. ԴԵՐՍԷՍ

Յարմար ատեն։

(Պապ կ՚մտնէ։)

ԿԱՑՍՐ

Այրենեացդ թշուառ վիճակին անշուշտ տեղ եակ ես։

ՊԱՊ

Այո՛ վեհափառ Տէր, և սիրոս վերջին աստիճան կ՚ցաւի մանաւանդ հօրս ունեցած անկարգ ընթացքին վրայ։

ԿԱՑՍՐ

Մենք հիմայ կ՚խորհինք այս չարաբաստ գործոնին մը տանիլ, զքեզ Ազգիդ վրայ թագաւորեցընելով, եթէ Արշակ հօրդ ընթացքը չ՚բռնելու խօսք կ՚ուտաս։

ՊԱՊ

Վեհափառ Տէր, քանի որ թագաւոր հօրս ին-

թագը Հայաստանի այսչափ աղէտ պատճառեց, մանաւանդ թէ ինձ ալ անհաճոյ է, ի՞նչպէս կրնամ աստանկ աղիտաբեր ճամբու մը մէջ ես ալ քալել։

ԿԱՑՍՐ

Երեմն խօսք կ'ուզես որ քու մինչեւ վերջին կէտդ Հայրենեացդ բարեբաղդութեան հոգ տանիս, ու Աստուծոյ և մարդկան հաճելի ընթացք մը բռնես։

ՊԱՊ

Ի բոլոր պտէ վերհափառ Տէր, մանաւանդ թէ անհրաժեշտ պարտաւորութիւն է։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ընդունէ իմ ալ երաշխաւորութիւնս Տէր իմ։

ԿԱՑՍՐ

Այո՛, կ'ընդունիմ սիրով. բայց այն առաջարկութեամբ՝ ինչ որ քիչ մը յառաջ ձեզի ըսի։ Թէ քու ընտանիքդ Պա՛պ, իմ քովս պատանդ պիտի պահեմ. մինչեւ որ Տերենտիանոս զօրավարը դառնայ Հայաստանէն, և Հայաստան բարեկարգ ու խաղաղ վիճակի մէջ մտնէ։

ՊԱՊ

Ներէ՛ ինձ վերհափառ Տէր, եթէ կ'համարձակիմ հարցնելու թէ արդեօք իմ ընտանեացս ներկայութիւնը Հայաստանի բարեկարգութեան և խաղաղութեան արդե՞լք պիտի ըլլայ։

ԿԱՑՍՐ

Այդ ըսել չե՛մ ուզեր։

ՊԱՊ

Երեմն ի՞նչպէս Հայաստան զատեմ տուն

ընտանիքս ալ հետս տանելու։ Հայր մը ունէի հոն վեհափառ Տէր, թագաւոր հայր մը, և կորսնցուցի զայն. և ինձ հիմայ միակ մխիթարանք՝ ընտանիքս է։

ԿԱՑՍՐ

Հայր մը ունէիր հոն այո՛, թագաւոր հայր մը, և կորսնցուցիր զայն. բայց հայր մը՝ որ իր Տէրութիւնը կառավարել չ'գիտցաւ. հայր մը՝ որ իր թագաւորութեան հետ մէկտեղ իր կեանքը և երկրին հանգստութիւնը կորսնցուց։ Ուստի և քեզ միակ մխիթարանք հիմայ պա՛պ, Հայրենիքդ երջանիկ և խաղաղ վիճակի մէջ տեսնելն է։

Բարեկարգէ՛ զայն և ամէն կերպիւ. թո՛ղ խաղաղութիւնը և հանգստութիւնը տիրէ Հայաստանի մէջ, և ընտանիքդ անմիջապէս քովդ պիտի գտնես։ Այս է իմ փափաքս, և այս բանիս համար է որ զքեզ Հայրենեացդ վրայ կ'թագաւորեցընեմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛ վեհափառ Տէր, Հայրենեաց օգուտը չի՝ ներեր իրեն՝ որ Ձեր առաջարկութիւնը մերժէ. այնպէս չէ՞ պա՛պ։

ՊԱՊ

Բանի՛ որ այնպէս կ'ուզենք . . . . . ։

ԿԱՑՍՐ

Ուրեմն իմ բոլոր օգնութիւնս ձեր հետն է։ (Ոտքի վրայ ելնելով) Երթա՛նք ամէն բան կարգադրելու, և քիչ մը վերջը մեծ բանակով ճամբայ կ'ելնէ՛ք։

(Կ'երթայ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Երթալով) Մխիթարուէ՛ անգութ ձեռքերէ հարուածեալ Հայաստան։

ՊԱՊ

Մխիթարուէ՛ և դուն Պապ, եթէ կրնաս հայրդ և ընտանիքդ կորսնցընելով մխիթարուիլ . . . . . :

Ու ինչո՞ւ Արշակ հօրս ընթացքը ես ալ անկարդ խստավանեցայ . միթէ պատերազմի վիճակը փոփոխելի չէ՞ միշտ . միթէ յաղթութիւնը շարունակ մէկ անձի վրայ կ՚ինկնէ : Ո՛հ . չէ՛ հայր իմ, եթէ այս անգամ բաղդը քու վրադ խոժոռ նայեցաւ, ես պիտի հեռացընեմ անոր երեսի կնճիռը, և պիտի ցուցնեմ բոլոր աշխարհի, նաև հոս իմ ընտանիքս արգիլող Կայսեր իսկ՝ որ դու զաւակ մը թողուցիր գ.քեզ մը տածող և քու վրէժդ լուծող :

(Եմիլիոյ Զարմանդուխտ կ՚պեռնէ և էջ կ՚դառնայ :)

Ով բաժանումնք, Զարմանդուխտ կ՚ուզայ . ահ, ինչպէս պիտի կրնամ բաժնուիլ . . . զաւակներս . . . արիութիւն տուր իմ սրտիս, ով Երկինք . . . . :

(Զարմանդուխտ և Արշակ կ՚մտնեն :)

ԱՐՇԱԿ

Հայրս . . . (հօրը վրայ վազելով) Հայրենիք պիտի երթանք հայր իմ :

ՊԱՊ

Ի՛նչ անոյշ ձայն, ինչ փարելի հնչում :

(Կ՚նստի աթոռին վրայ զԱրշակ տովը առնելով, և աչքերը կ՚գոցէ :)

ԱՐՇԱԿ

Դուն կ՚ուլա՞ս հայր իմ :

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Դեռ իւր հայրը կ՚մտածէ, դեռ Արշակայ մահուանը վրայ կ՚հեծէ :

Ցանկ Պապ, ելնենք իմ թագաւորս Տէրս . եթէ Արշակ

հայրդ մեռաւ, զքեզ Հայոց վրայ թագաւոր թողուց։ Ելէր, այսպիսի երջանկութիւն մը տրամութեամբ մի՛ շնորհաւորեր։ Ուրախացէր Տէր իմ, Հայաստա՛ն պիտի դառնանք։

ԱՐՇԱԿ

Այո՛ Հայր, երթանք մեր Հայրենիքը։

ՊԱՊ

Երկինք, ի՞նչպէս գուժեմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Բայց ըսէ՛ Պապ, ի՞նչ է քեզ տրտմեցրնողը։

ՊԱՊ

Ձեր կորուստը։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Մեր կորուստը։

ԱՐՇԱԿ

Հայր իմ։

ՊԱՊ

Սիրելի Արշակս, այդ քաղցր հնչումը ալ այս ակամնջներս պիտի չ'լսեն։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Բայց ի՞նչ կ'խօսիս Տէր իմ, ինչո՞ւ սատնկ երջանկութիւն մը տրամութեամբ կ'լեցրնես։

ՊԱՊ

(Ոտի վրայ ելլելով) Երջանկութիւն, չէ՛ Զարմանդուխտ, թշուառութիւն ըսէ։ Ինքդ Կայարը չի՞ թողուր որ զձեզ իմ հետս Հայաստան տանիմ...։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հապա ինչ պիտի ըլլամ ես, ինչ պիտի ըլլան զաւակներս՝ Արշակն ու Վաղարշակը։

ՊԱՊ

Պատանդ պիտի կենաք Կայսեր քով։

ԱՐՇԱԿ

Ձէ՛, Հայը իմ մեզի մի՛ թողուր։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ թանելոց ուրախութիւն . . .։

(Ս. Ներսէս։ Ի՛մպնէ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաղջալերուէ՛ Պապ, Հայրենեացդ վիճակը քեզ մէ կախում ունի։

ՊԱՊ

Ես իմ վիճակս . . .։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ազատեցէք Սրբազան Հայր, ազատեցէք Կայսրը՝ որ թողու մեզ ալ Հայաստան երթալու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ո՛ զարմանդուխտ, Տէրութեան գործերը քեզ ծանօթ չեն. որչափ որ դժուար և անտանելի է այս բաժանումը, բայց միանգամայն իբրեւ թագուհի և պատուով պիտի կենաք քիչ մը առեն այս պալատին մէջ։ Այս ալ գիտցէ՛ր որ այս բաժանումը Հայրենեաց օգտին կ՚նպաստէ, նոյնպէս և Պապայ։

ՊԱՊ

Նոյնպէս և երկուքին ալ վնասուն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Աղէ՛ Պապ, պէ՞տք է Հայ թագաւորի մը այդպէս թուլասիրտ ըլլալ։ Այս որ զքեզ թագաւորեցընելու աշխատեցայ, ես դարձեալ կ'խոստանամ քու ընտանիքդ քիչ առենէն Հայաստան դարձընել, երբ ամէն բան խաղաղի։

Այս միթէ ապահովել կ'կարծես դուն, պատերազմի վտանգաւոր դաշտին վրայ ընտանեացդ դեգերիլը։ Հայրենեաց սոյգ օգուտը, և մանաւորի անսոյգ օգուտը քու առջեւդ կ'ներկայացընեմ. խօսէ՛ Պապ, որո՞ւ կ'ուզես հետեւիլ։

ՊԱՊ

Հայրենեաց օգտին կ'զիջանիմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ճշմարիտ Հայ թագաւորի մը պարտքը կատարեցիր։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Թո՛ղ ուրեմն Հայրենեաց սէրը յաղթէ ընտանեաց սիրոյն. և ես յետոյ կ'ուզամ Տէր իմ, Հայաստանի մէջ յաղթութեան կամարէն անցնիլդ տեսնելու։

ՊԱՊ

Ո՞նաս բարեւ Զարմանդուխտ, արժանի Հայոց վրայ թագուհի մը ըլլալու։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Երթաս բարեւ սիրելիդ իմ Պապ. Ջանամ արժանաւորապէս Հայրենեաց վրայ իշխելու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Երթանք։ Ողջամբ մնամ Զարմանդուխտ։

ԱՐՇԱԿ

Ո՞Ւր կ՚երթաս, Հայր իմ . . . . . :

ՊԱՊ

Ան, սիրելի Արշակս, համբոյր մը, համբոյր մը քու չքնաղ այտերէդ :

Ես Հայրենեացս համար պատերազմելու կ՚երթամ. մեծցիր դուն ալ Հայ արիւնով, և ծերութեան մէջ իմ նեցուկս եղիր Հայրենիքդ պաշտպանելու. քեզմէ կ՚բաժնուիմ սիրելի Արշակս, և կ՚երթամ Հայաստանի օգուտը գրկելու :

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ՚ԳՈՅՈՒԻ :



ԷՐԷՐՈՒԱԾ ԵՐԳՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ս. ՆԵՐՍԷՍ, ՊԱՊ, ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ, ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ԿՈՍՏԱՆԴ, ՎԱՂԱՐՇ Ի՛ՄԱՍԷՆ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Կոստանդ։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Օրքերուն հրաման տուր քիչ մը հանգչելու, և դուն Թշնամեաց կողմերը լրտեսէ։

(Կոստանդ Ի՛մեկնի։)

Ուկէք Տէր իմ, և դուք Հայր Սրբազան, եկէք այս ժայռերուս վրայ հանգչինք, մինչեւ որ Կոստանդ Թշնամեաց կողմէն մեզի տեղեկութիւն բերէ։

ՊԱՊ

Սմբատ Բագրատունի, իմ քաջ զօրապետս, և դուն հաստաբազուկ Մուշեղ, Հայաստանի բաղդը այսօր ձեր ձեռքին մէջ պիտի փորձուի։

ՍՄԲԱՏ

Եւ Ձեր Թագաւորական գլուխը պիտի իջնէ, Տէր իմ։

ՄՈՒՇԵՂ

Եւ Հայաստանի վրայ պիտի հանդչի։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, Հայաստանի վրայ, ուր անոր կենդիրը տա-
կաւին դրոշմուած է. Հայաստանի վրայ՝ որուն աւե-
րակները իմ սիրոս խոցեցին, տառեցաւ իմ արիւնս,
որովհետեւ զայն կենդանի թողուցի. բազմամարդ էր
այն և ոչ ամայի, շէն և բարեկարգ էր, երբ իրմէ
բաժնուեցայ։ Այո՛, անօրէն Մերուժան։

ՍՄԲԱՏ

Անարժան Հայ անուան։

ՄՈՒՇԵՂ

Անանիչ Հայրենեաց։

ՊԱՊ

Անողորմ ճիւաղ, վայրենի գազան։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Եւ իբրեւ գազան կ'կործանի՝ անշուշտ այսօր
այս դաշտիս վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Մեծ է երկնից կարողութիւնը . . .։

ՊԱՊ

Այո՛, թէ զինքը դեռին փառաւոր տեսնէի, վեր-
ջին շունչը հանէր իւր բերնէ, գթութիւն խնդրէր
օձի նման սողալով, և վերջին մահաւոր հարուածը
իջեցընէի անոր անիծեալ գլխուն։

(Կոսպանդ Ի՛մպանէ։)

ԿՈՍՏԱՆԴ

Թշնամեաց բանակը այս բլրակին ստորոտը կը-գտնուի։ Մերուժան զօրքերուն գլուխը անցած է և յառաջ կ՚վարէ զանոնք։

ՊԱՊ

Պատերազմի նշանը տուէք, զօրքերը պատրաստուին։

(Գաղարը կ՚ծեծեն։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Բրանան ամուր պատերազմի վտանգը հնչելու։

(Կոստանդ. կ՚ծեծեն։)

ՊԱՊ

Պատերազմի նշանը տուէք, զօրքերը պատրաստուին։

Բայց Սմբատ, դուն քու բանակովդ իմ աջ կողմս միշտ գտնուիր։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ինչ կ՚ըսէք Տէր իմ, անկարելի է որ բանակին մէջ մնանք։

ՊԱՊ

Ես կենամ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ձեր կեանց ապահովութեան համար։

ՍՄԲԱՏ

(Մուլէղէն) Ձ՚թողունք որ թագաւորը պատերազմի մէջ մնայ։

ՄՈՒՇԵՂ.

Այո՛, պէտք չէ մնայ։

ՊԱՊ

Մինչ նախատինք է ինձ, ինչ ասեն այս կեանքը՝ զոր Հայրենեացս պարտական եմ, անոր բարութեանը համար զոհելու ըլլամ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Թագաւոր Տէր, Հայրենիքդ քու կենացդ աւելի շատ պէտք ունի հիմա. և զայն պէտք ես ապահովցնել, եթէ Հայրենիքդ կ'սիրես։

ՍՄԲԱՏ

Վեհափառ Տէր, մեր բոլոր էութիւնը Ձեզ համար դրած ենք։

ՄՈՒՇԵՂ

Մեր բազուկները թշնամին վանելու պիտի չ'ուշանան։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Հաւանէ մեզի արիասիրտ Տէր։

ՊԱՊ

Բայց ինչ բանի համար Կայսրը զիս Թագաւոր ըրաւ. անոր փառքը և հանգստութիւնը վայելելու միայն, երբէք. հապա պէտք եղած ժամանակ պատերազմիլ զօրաց հետ մէկտեղ, ու նաև արիւն թափել Հայրենեաց համար։

Ընտանեկ յարմար ժամանակ. իմ աներկիւղ բազուկներուս ցոյը պիտի փորձեմ։ Այնչափ երկչոտ մի կարծէք Հայոց Թագաւորը՝ որ մահուանէ վախնայ։

(Պարէրազի դէմը կ'հանի։)

Կրէ սրեմ, ժամանակ չ'կորսնցընենք . . . . ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Բանջդ, ապատեցէք վայրկեան մը, կ'ապաչեմ։ Մենք ամէնքս ալ որսով Ձեզի համար պատերազմելու եկած ենք։ Մեթէ պատերազմին մէջ դժբաղդաբար Ձեզի փորձանք մը պատահի, ես ի՞նչպէս կոյսեր առջեւ ներկայանամ. ասով իմ կեանքս ալ վտանգի մէջ պիտի դնէք։

Ասոր կ'ապաչեմ, Տէր իմ, այդ դիտաւորութիւնդ փոխեցէք. պատերազմի յաջողութեան վրայ ամենեւին կասկած մի՛ ունենաք. քիչ մը վերջը ես անձամբ պիտի հնչեցնեմ Ձեր ականջին յաղթութեան ուրախալի լուրը։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաւանէ՛ Պապ։

ՊԱՊ

Բանջասէրս զօրապետներս, յոյս ձեր վրայ դրած եմ։

ՄՈՒՀԵՂ Լ ՍՄԲԱՏ

Եւ մենք երկնից վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Յառաջացէք ուրեմն անվեհեր, երկի՛նք զձեզ պաշտպանէ, ձեր բազուկները զօրացընէ, և պարգեւէ թշնամեաց վրայ փառաւոր յաղթութիւն մը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ա՛զէ ուրեմն։ (Սուրը հանելով)

ՍՄԲԱՏ

Ի զէ՛հ։ (Դոյնպէս)

ՄՈՒՇԵՂ

Ի վրէժ Հայրենեաց։ (Ծոյնպէ»)

ՊԱՊ

Ողջամբ դարձջիք յաղթութեամբ։

(Պապ, Ներսէս և Վաղարշեն ղաք՝ դռանէրը ի՛երլան։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաստատուն եմ Տէր իմ, որ ասանկ ջղապինդ բաղուկներու տակ թշնամին պիտի ընկճի։

ՊԱՊ

Վստահ եմ, բայց ոչչափ սիրտս կ'եռայ նոյն փառքին ես ալ մասնակից ըլլալու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Արդէն այս փառքը Ձեզի համար է, Տէր իմ։ Խոհեմութիւնը պատերազմի ամենէն զօրաւոր զէնքն է. ուր քաջութիւն առանց խոհեմութեան՝ անընդունելի, և մանաւանդ վտանգաւոր է շատ անգամ։

ՎԱՂԱՐՇ

Յարձակումը սկսաւ . . . . . ։

ՊԱՊ

Ընկէք Սրբազան Հայր, եկէք, գոնէ այս ժայռիս վրայ ելնենք և պատերազմի վիճակը դիտենք։

Ս. ՆԵՐՍԷՍ

Վանէ թշնամիները բարեգութ Աստուած, զօրացո՛ւր մեր բանակը՝ որ քու Ամենատուրը հաւատքդ պաշտպանելու համար կ'պատերազմի . . . ։

ՎԱՂԱՐԾ

Թշնամին կ'տկարանայ . . . :

ՊԱՊ

(Ժայռին վրայէն) Ներուժան կ'փախչի . . . ձիէն վար ինկաւ . . . բանակէն դուրս կ'ելնէ . . . :

Նայեցէք Սմբատը, քաջ Սմբատը, որ արագընթաց նժոյգի մը պէս անոր ետեւէն կ'վազէ . . . կը հալածէ . . . անհրեւոյթ եղաւ . . . :

(Ժայռին վրայէն կ'իջնէ դէպ 'ի պէսարանին ներքը :)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ի՞նչպէս թշնամին շուարեալ փախչիլ կ'ուզէ և չ'կրնար :

(Ծոյնպէս ժայռին վրայէն ներս կ'երթայ :)

ՎԱՂԱՐԾ

Ո՛վ երջանկութիւն, յաղթութիւնը մեր կողմն է :

(Ծոյնպէս կ'մտնէ :)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Սմբատ կ'մտնէ Մերոժանի ընտիրը կապած. ձի յեռոտվերկոնք շամփոր մը կ'բռնէ, և ձրոտով Մերոժանի մաղերէն կ'քաշէ :

ՍՄԲԱՏ

Հիմա զքեզ թագաւոր պիտի պատկեմ, որովհետեւ Հայոց վրայ թագաւորել կ'ուզէիր :

ՄԵՐՈԻԺԱՆ

Կ'աղաչեմ զիս արձակէ, խօսք կ'ուտամ ասկէ վերջը ճշմարիտ Հայ ըլլալու, և շատ ընծաներ կը պարգեւեմ քեզ . . . :

ՍՄԲԱՏ

Ընծայ, կորուստը երթայ քեզի հետ նաև քու ընծադ։ Ի՞նչ փոխարէն կրնաս տալ դուն, որ քու այնչափ վնասներուդ, թափել տուած անմեղ արիւններուդ, և Հայաստանի աւերակներուն տեղը լեցընէ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Ի՛նչ որ կ'ուզես, միայն թէ զիս ազատէ։

ՍՄԲԱՏ

Քու կեանքդ, և ասով իմ Հայրենիքս անգութ գազանի մը ձեռքէ կ'ազատեմ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Իմ կեանքս, ես անգութ գազան... ահ, դուն ինձի հետ ձեռքերս կապած կ'խօսիս։

ՍՄԲԱՏ

Քու կեանքդ այն, որով նախատինք եղար դուն մարդկութեան և Հայաստանի. քու կեանքդ՝ որ գազանի մը կեանք էր, անգութ ճիւաղի մը, հրէշի մը...։

ՄԵՐՈՒԺԱՆ

Յիշէ՛ Սմբատ, Մերուժանն եմ ես. յիշէ՛ իմ առուիճանս, յիշէ՛ իմ կարողութիւնս՝ զոր ձեռքերս կապուած ժամանակ իսկ կրնամ ցուցնել։

ՍՄԲԱՏ

Յիշեմ... բայց յիշելով իմ զայրոյթս կ'գրգռի. Մերուժա՞նն ես դուն, Հայրենեաց մատնիչը, աշխարհի սակաւը և երկնից անէծքը։

Քու առուիճանդ՝ քու դատակնիքդ է այս շամփուրիս վրայ գրուած։ Այս առուիճանը քու ճակտիդ

վրայ պիտի դրոշմեմ հիմա՝ որուն փափաքեցար։ և որուն հասնելու համար, ամէն գուրթ և կարեկցութիւն խեղդեցիր։ Մոռցար՝ որ Հայաստանի զաւակ մ՝էիր դուն. մոռցար՝ որ Հայրենիքդ էր քու փառասիրութեանդ զոհ եղողը . . . ։ Անանկան զգացմունքը և գուրթը քու աւերիչ ոտքիդ տակ կոխեցիր. գոցեցիր քու ականջդ անմեղներու հառաչանաց. անպատուեցիր Հայ անունը՝ որով կոչուելու անարժան էիր։

Երդ՝ Մերուժան, քու այսչափ աղէտներուդ փոխարէն, այս շամփուրովս զքեզ պիտի պատկեմ. և չէ թէ միայն զքեզ, այլ և քու յաջորդներդ, եթէ երբէք կրնան գտնուիլ քու անհեռանալէդ վերջը. յառաջ . . . . . ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Սմբատ, քաջդ Սմբատ, երբ զղջամ ու պաղատիմ քեզի, իմ զղջումս պէտք է որ ապարդիւն թողուս։

ՍՄԲԱՏ

Ամէն աղաչանք և խնդիր այս շամփուրիս ծայրն է . . . գիտե՞ս Մերուժան, թէրեւ Բագրատունի՝ իշխանութիւն ունիմ թագաւոր պատկելու։

ՄԵՐՈՒԺԱՆ

Այց թող այդ կ'ծուռ նախատինքները Սմբատ, գութ ունեցիր իմ վրայ։

ՍՄԲԱՏ

Գութ, և քու վրադ . . . գթացիր դուն ա՛նողորմ, երբ Աստուածային տէրը Սեզանները հրատարակելու փոխեցիր. գթացիր, երբ անթիւ անձեր

քրիստոնէութեան համար զոհել տուիր . գթացիր անգութ , երբ պանծալի Հայաստան կ'ուզար . . . :

Ա՜հ , դուն ինձմէ գթութիւն մի խնդրեր . դուն իմ Հայրենիքս աւերակ դարձուցիր . դո՞ւն . . . չ'եմ կրնար համբերել . թաղուի՛ քու անուանդ երկրիս անդունդներուն տակ . չ'ըսուի՛ որ Մերուժան Հայ մի էր . . . աղէ . . . . . :

ՄԵՐՈՒԺԱՆ

Ավ երկինք , և չ'ես ուզեր այս թշուառ վիճակիս մէջ զիս ազատել :

ՍՄԲԱՏ

(Մաղէրէն բռնելով) Կ'ազատեմ իմ Հայրենիքս . . . :

ՄԵՐՈՒԺԱՆ

Թո՛ղ ուրեմն ալ զիս , հեռո՛ւ , հեռո՛ւ Սմբատ . յուսահատութիւնը վրաս կ'բռնանայ , և մի՛ կարծեր որ ալ պիտի ազատիմ քեզի : Մերուժան Սմբատի ոտքը խոնարհի , թողութիւն խնդրէ և չ'ընդունի . . . և ո՞վ ես դուն՝ որ զիս շամփուրով պիտի պատկես . . . :

ՍՄԲԱՏ

Սմբատ , Հայրենասէր Սմբատը :

ՄԵՐՈՒԺԱՆ

Բայց երբ Մերուժան իւր վերջին վայրկենին մէջ բոլոր ոյժը ամփոփէ , կարո՞ղ է քեզի պէս տանը Սմբատ իւր բարկութեանը զոհ ընել :

ՍՄԲԱՏ

Բայց մոռանէ՞ որ Սմբատ մը հիմա մեկ վայրկենի

մէջ քու բոլոր ոյժդ՝ և զքեզ ալ մէկտեղ պիտի ոչընչացընէ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Ընչանամ Սմբատի ձեռքով... մի մտեռնար... դողա՛ այս աչքերէն՝ որ կատաղութեամբ կ՚ելեցուի...։

ՍՄԲԱՏ

Ու մահուան ատուերով պիտի փակուի...։

ՄԵՐՈՒԺԱՆ

Կարողութիւն մը... հեռացիր անգութ, ամէն բան աչքիս առջեւ կ՚սեւնան...։

(Կապերը ի՛նկէ ու վրան ի՛վազէ։)

ՍՄԲԱՏ

Այսպէս ուրեմն կ՚ուզես դուն վրաս յարձակիլ։

(Սուրը հանելով։)

ՄԵՐՈՒԺԱՆ

Այսպէս ուրեմն կ՚ուզես դուն հետս կռուիլ. վատասիրտ, ձգէ՛ սուրդ գետին և եկո՛ւր հետս կռուելու...։

ՍՄԲԱՏ

Իմ սուրս քու անօրէն արտիդ համար պահած եմ. ես վատասիրտ, և Մերուժանի՛ մը բերնէ կ՚լսեմ այս նախատինքը. ալ Մերուժան, պատրաստուէ՛ վերջին հարուածիդ...։

(Սրով վրան ի՛նկնելով։)

ՄԵՐՈՒԺԱՆ

(Տէսարանէն Բուլբուլը վազելով) Ա՜հ, գաշտին մը . . . ։

(Երկու՝ զինուորք ժայռին վրայ կ'ելնեն ։)

Ա. ԶԻՆՈՒՈՐ

Մերուժան . . . ։

(Տէսարանէն վար կ'իջնէ ։)

Բ. ԶԻՆՈՒՈՐ

(Ժայռին վրայէն) Ռանե՛նք զինքը . . . ։

(Ներսէս վար կ'իջնէ ։)

ՍՄԲԱՏ

(Հարուածք մը փալով Մերուժանի վազած ժամանակ.)

Ռանեցէք . . . ։

(Մերուժան կ'բռնուի զինուորներէն ։)

ՄԵՐՈՒԺԱՆ

Ինչ սուէք զիս . . . . . ։

ՍՄԲԱՏ

Ա՛լ ապասելու ժամանակ չ'կայ, երթա՛նք. զքեզ պիտի պահեմ այս շամիրով. երթա՛նք, դուցէ Սրբազանը գալով քու վրադ կ'գթայ ։ Մերուժան անուղղելի նախատի՛նք պիտի սեպուի ասկէ ետքը ։

(Կ'երթան ։)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

(Դռան մէջ) Յաղթութիւն, յաղթութիւն, փառաւոր յաղթութիւն։

ՊԱՊ. Ս. ՆԵՐՍԷՍ. ԿՈՍՏԱՆԴ. ՎԱՂԱՐՇ

(Բը-ին վրայէն հեռագրեր իջնելով։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Երջանիկ օր։

ՊԱՊ

Բարեբաստիկ օր։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրախացիր վեհդ Հայաստան։

(Տերենտիանոս ի՛մքնէ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Յաղթութիւն կ'աւետեմ, թշնամեաց բանակը կորագլուխ ջարդուեցաւ։

ՊԱՊ

Բա՞յց Տերենտիանոս, ի՞նչ երջանիկ օր է այս. ի՞նչ բերկրաւիթ օր, որ փառաւոր յաղթութեամբ Հայաստան պիտի դառնանք։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Տերենտիանոսին) Եւ ուր քու քաջութիւնդ ամէն բերան պիտի խօսի։

(Մուտք ի՛մքնէ յեռուքը սուղաարտ մը և սուր մը։)

ՄՈՒՇԵՂ.

Ահաւասիկ տէր իմ, Ուռնայը Աղուանից գոռոզ թագաւորին սաղաւարտը և սուրը. զինքը մէկ հարուածով մը գետին թողուցի, չուզելով որ պատկեալ գլուխ մը իմ ձեռքովս իյնայ։

ՊԱՊ

Ով քաջդ Մուշեղ, քայց ո՞ւր է Սմբատ։

ՄՈՒՇԵՂ.

Ընի հրացեալ շամփուրով մը Մերուժանը կը-պատկէ։

ՊԱՊ

Մերուժա՞ն, կատարեա՛լ ուրախութիւն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ազատեցա՛ Հայաստան բռնաւորի մը ձեռքէ։

ՏԵՐԵՆ ՏԻԱՆՈՍ

Ահա՛ ինքը։

(Սմբատ ի՛մպանէ։)

ՊԱՊ

(Գրիգորվ ալյան) Ինչպրատուներաց պատիւը և Հայաստանի պարծանքը, սիրելիդ իմ Սմբատ։ Հայաստանի ազատիչը պիտի սեպուխ դուն։ Ո՛հ, տո՛ւր այդ շամփուրը, մեր յաղթանակն է այդ՝ որով Հայաստանի թշնամին խորտակեցիր։

ՍՄԲԱՏ

Ընոր անշուշտ դիակը կ'կենայ հիմա պատերազմի դաշտին վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այս է հայրենասեաց մանչի մը արժանի վիճակը և վարձատրութիւնը։

ՊԱՊ

Քաջամիրա զօրավարներս, ես ինչպէս որ ձեզմէ բոլոր սրտանց շնորհակալ եմ այսպիսի փառաւոր յաղթութիւն մը ձեռք բերելուդ համար, նոյնպէս և ապահով եղէք, որ ես ալ այնպիսի առիթներ պիտի տամ ձեզի՝ որ ինձմէ շնորհակալ ըլլաք։

Ցերեւոյթներս զօրավար, դուն որ այս յաղթութեան մասնակից եղար, չեմ մոռնար իմ սրտանց շնորհակալութիւնս և երախտագիտութիւնս գործքով ալ յայտնելու թէ՛ քեզ, և թէ՛ վեհափառ Ինքնակալիդ։ Հիմա ամէն բանէ առաջ հանգստանալու հարկաւորութիւն ունինք. դառնանք ուրեմն Հայաստան, ուր ժողովուրդը անհամբեր մեզ դիմաւորելու կ'ապասէ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, մեկնինք քաջամիրա ոգիներ, երթանք Հայաստանի խաղաղութիւնը, փառքը և բարեկարգութիւնը վերստին հաստատելու։ Մեկնինք այս փառաւոր դաշտէս, ուրտեղ այսօրուան փառաց ու յաղթութեան անմահ յիշատակը յաւիտեան մնամառանալի պիտի մնայ...։

ԱՄԷՆՔԸ

Երթանք...։

(Կ'երթան։)

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԳՈՅՈՒԻ։



Ich, Sperfu quandans de Gyfylung: Guyr Ddiol qui Bowlunn mytlyffyr ..... (Cyfrwng

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՐՑԱՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍՄԲԱՏ (Ա-ՈՒՆՅԻՆ)

Ափսո՜ս, սառնք Տէրութեան մը կործանուելուն նախագուշակութիւններն են. կամաց կամաց բարեկարգութիւնը ձեռքէ կ'ձգէ, զեղխութիւնը և անկարգութիւնը իրեն օրական զուարճութիւններն եղած են։ Հայաստանի թագաւոր մը, ի՞նչպիսի թագաւոր...։ Այս քանի՞ անգամ է որ ուրբ Հայրապետը զայն կ'յանդիմանէ ու կ'խրատէ. բայց 'ի զո՞ւր, այն ազգու խրատները անոր վրայ ազդեցութիւն մը չ'են կրնար ընել։

Այս որ պատերազմի դաշտին մէջ Մերուժանի մեղապարտ արիւնը թափեցի՝ միթէ Հայրենեացս օգտին համար չէ՞ր, Հայաստանի ազատութեա՞ն համար. բայց երբ անոր օգուտը արհամարհուած կ'տեսնեմ, երբ ազատութիւնը խեղդուած, և Հայաստան զեղխ բռնաւորի մը զզուելի կամաց գերի, նոյն է թագաւոր մը՝ ինչ որ Մերուժան...։

(Մուշեղ կ'մտնէ։)

ՄՈՒՇԵՂ

Ո՞ւրախ վրդոված կ'տեսնեմ զքեզ, քա՛ջդ Սմբատ. այո՛, պատճառը ինձ դաղտնի չէ՛, իմ սիրտս ալ կ'ցաւի այս անկարգութեանց վրայ։

ՍՄԲԱՏ

Ընկեր Մուշեղ, կ'վախնամ որ Արշակայ աղէտները իր տղուն ձեռքով պիտի նորոգուին. յայտնի կ'տեսնեմ որ թշուառութեանց ու աղէտից թանձր ու մութ ամպը՝ Հայաստանի մթնոլորտին վրայ դարձեալ ծանրանալու կ'մօտի։

ՄՈՒՇԵՂ.

Որը այսպիսի թագաւոր մը ունինք . . . . ։

ՍՄԲԱՏ

Ահա ինքը դաժան կերպարանքով մը կ'մօտենայ . . ։ Երթանք, քանզի Մուշեղ. մեկնինք այս տեղէն, որովհետեւ չեմ ուզեր անոր երեսը տեսնել. բայց չէ թէ Արշակ իւր հայրը իմ սերունդս բոլորովին ջնջելուն համար իւր որդւոյն դէմ ատելութեան ոգի ունիմ, բնաւ։

Գիտես Մուշեղ, որ ես իմ Հայրենիքս իմ անձէս աւելի շատ կ'սիրեմ. և անոր բարութեան համար պատրաստ եմ միշտ արիւնս անգամ թափել, եթէ հարկ ըլլայ։ Երթանք, գոնէ սուրբ Հայրապետը աղաչենք, որ անգամ մ'ալ զայն խրատէ. թէպէտ և իրեն խօսքերը միւնոյն ազդեցութիւնը պիտի ընեն անոր վրայ։

ՄՈՒՇԵՂ.

Երթանք Հայրենասէր Սմբատ, երթանք Սրբազանը գտնելու։

(Կ'երթան։)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Պապ կ'մտնէ։)

ՊԱՊ

Ի՛նչ ըսել ըլլայ, միթէ ես այս թագաւորական թագն ու գաւազանը ուրիշէ յանդիմանութիւն լսելու համար կ'կրեմ... ։ Իմ բռնած ընթացքս Ներսէսի հաճոյ չ'թուիր։ Ու ինչո՞ւ, և ի՞նչ իրաւունք ունի հաւնելու կամ չ'հաւնելու...։ Ներսէ՞ս Պապայ իշխանութեան տակն է, և ո՛չ Պապ՝ Ներսէսի. քանի որ այս երկրիս օրինաւոր թագաւորն եմ, իմ ըրածներուս դիմահար մէկը պէտք չէ՛ գտնուի։

Ա՛ս կ'հրամայեմ հոս, ես կ'վճռեմ, և ամէն մարդ նաև Ներսէս՝ որ ինքզինքը Պապէն զօրաւոր կ'կարծէ, պէտք է ինձ խոնարհի և հնազանդի...։

(Վաղարշ կ'մտնէ։)

ՎԱՂԱՐՇ

Տէր իմ, սուրբ Հայրապետը քիչ մը ժամանակ զքեզ տեսնել կ'ուզէ։

ՊԱՊ

(Դարձեալ կ'ուզայ իմ անդորրութիւնս վրդովելու... պիտի չ'լսե՛մ իրեն, պիտի չ'թողո՛ւմ՝ որ ինձ ներկայանայ։) Հէ՛, Վաղարշ... բայց ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չ'եմ ուզեր անոր ներկայութիւնը, ինչո՞ւ կ'զամ անոր հետ խօսելու... անոր աչքերը իմ վրայ ազդեցութիւն մը ունին... անոր ձայնը իմ հոգւոյս խորը կ'զարնէ.....։

Այժ առ թուքսիրտ Պապ, թագաւոր մ'ես դուն, համարձակ եղիր և դիմէ...։ Բայց ուր դի-

մեմ, ահա ինքը կ'մտնեայ. ինչ վեհ կերպարանք, ինչ ազդու նայուածք. բայց ատելի է ինձ, չ'եմ ուզեր անոր նայիլ, համարձակութիւն...։

(Ախոռին վրայ կ'նստի։)

(Ս. Ներսէս կ'մտնէ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Չ'ախորժիր իմ ներկայութենէս. այս կերպ ընդունելութիւն...։) Ողջոյն Թագաւոր Տէր։

(Պապ չ'պատասխանէր։)

Ողջոյն Թագաւոր Տէր։

ՊԱՊ

(Ասանց ախոռէն էջնելու) Ինչ մը յառաջ.քու Թագաւորդ կ'յանդիմանէիր, և հիմա կ'ողջունե՞ս...։

Ս. ՆԵՐՍԷՍ

Նէթէ զքեզ յանդիմանեցի, Հայրենեաց օգտին համար էր. գիտցած եղիր Պապ, Հայրենեաց օգուտը .քեզմէ նախամեծար է։ Երբ անձնասիրութեան համար անիկայ կ'զոհուի, երբ անկարգութիւնը ու զեղխութիւնը անոր պատիւը կ'արատեն, իմ յանդիմանութիւններս ալ պիտի չ'դադրին։

ՊԱՊ

Բայց աւելորդ է այդ յանդիմանութիւնները կրկնել, երբ անօգուտ են և ազդեցութիւն մը չ'են կրնար ընել։

Ս. ՆԵՐՍԷՍ

Աւելորդ է ուրեմն իշխանութիւն մը՝ որ Հայրենեաց վնասակար է։

ՊԱՊ

(Ոտի վրայ ելնելով) Մտածէ՛ ըսածիդ վրայ Ներսէս . . . գիտե՞ս որ ձեռքէս ամէն բան կ՚ուզայ . . . մի՛ գրգռեր իմ բարկութիւնս . . . ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Բարկացէ՛ր . . . բայց բարկութիւնդ ինձ վնասելու չափ չկրնար զայրանալ ։

ՊԱՊ

Բայց . . . (Ձեռքը սուրին վրայ պանելով ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ձեռքը պրպին վրայ դնելով) Ահաւասիկ սուր պատասխանը . . . կ՚հասկնամ քու չարագործ միտքդ, բայց ինձ վախ չ՚պատճառեր . . . ։ Միտքդ բե՛ր ապերախտ, միտքդ բե՛ր. Հայրենեաց թշուառութեանց վրայ Թէոդոս Կայսեր առջեւ յորդ արտասուք թափեցի, որպէս զի զքեզ թագաւորեցընէ ։ Ի՛նչ, Հայաստանի աղէտները պիտի նորոգես քու անկարգ, զեղխ ու անպիտան իշխանութեամբդ ։ Հայոց ժողովուրդը՝ որ դեռ իր քաշած տառապանքները ու նեղութիւնները չ՚է մոռցած, վերատին թշուառութեանց մէջ գահավիժել կ՚ուզես ։

Միտքդ բե՛ր Արշակ, քու անագորոյն ու անխիղճ հայրդ յիշէ՛. որ Թէպէտ իր գործած պակասութիւնները ժամանակին չ՚էր իմանար, բայց վերջէն Անյուշ բերդին մէջ հասկնալով՝ որ ամէն թշուառութեանց պատճառ ինքն էր եղած իւր անկարգ կառավարութեամբը, յուսահատութենէ ինքզինքը բանտին մէջ սպաննեց ։

Ուղղէ՛ կ՚ըսեմ քու ընթացքդ. Աստուած՝ որ ըզ-

քեզ այդ պաշտօնին յատկացուց, քեզմէ հաշիւը պի-
տի վնտռէ. այս քու իշխանութեանդ տակ եղող ժո-
ղովրդոց կառավարութիւնը՝ քեզմէ պիտի պահանջէ։
Մտածէ՛ ատոնք, և իսկոյն պիտի զգաս որ ոչ վաղան-
ցուկ փառացդ կրնաս վստահիլ, ոչ անցաւոր զօրու-
թեանդ և ոչ դիւրեղծական մարմնոյդ. ատոնք ա-
մէնն ալ պիտի բաժնուին քեզմէ. մերկութիւնն է
ամէն բանի վերջը։ Մտածէ՛ ատոնք, և քու անձիդ
ու հոգւոյդ, մանաւանդ Հայրենեացդ թշուառու-
թիւն մի՛ պատճառեր։ Խօսէ՛ ուրեմն, պիտի ուզէ՞ս
քու ընթացքդ։

ՊԱՊ

Գէշ է՛ այս ընթացքս։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ա՛վ երկինք... աղէկ կ՚երեւի քեզ. հարիւրա-
ւոր անձեր բանտերու ու բերդերու մէջ ծանր շղ-
թաներու տակ յանիրաւի կ՚հեծեն ու կ՚հառաչեն.
անմեղ արիւնները օրէ օր երկիրս կ՚ծծէ. անկարգու-
թիւնը, զեղխութիւնը կ՚թագաւորէ պալատիդ մէջ,
չէ թէ դուն... կ՚ապաշխարեմ քեզի թագաւոր Տէր,
կ՚պաղատիմ, փոխէ՛ այդ քեզի աղէկ երեւցած ըն-
թացքը՝ որ չ՚զղջաս։

ՊԱՊ

Հեռացիր Ներսէս, բաւական է, բաւական է որ-
չափ որ խօսեցար. քու խօսքերդ բնաւ իմ վրս ազ-
դեցութիւն չ՚ունին. իմ թագաւորական ատոիճանիս
մէջ՝ չ՚եմ ուզեր մէկէ մը յանդիմանութիւն լսել։

Ս. ՆԵՐՍԷՍ

Բանի որ ատոնք յամառ ես ու պիտի ըլլաս, ես

ալ իմ ունեցած իշխանութեամբս՝ կ՚զրկեմ զքեզ ե-կեղեցական յարաբերութենէ, և ասկէց վերջը կա-ցուղ չ՚ըլլաս Եկեղեցի մտնել։

ՊԱՊ

(Ընդ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, անկարգ իշխանի մը համար ալ ուղղ ալ և իրաւացի պատիժ մ՚է այս։

(Կ՚մեռնի։)

ՊԱՊ

(Առանձին) Եկեղեցական յարաբերութենէ զրկուած . . . . և ինչո՞ւ համար. ո՞վ է այս անձը՝ որ կ՚համարձակի ինձ դէմ այսչափ խստութիւն բանեցընել . . . Ներսէս . . . և որո՞ւ վստահանալով իմ գործերս կ՚յանդիմանէ . . . ։

Դիտնալ պէտք է որ Պապ շատ հնարքներ գիտէ՝ մարդս մէկ վայրկեանի մէջ յերկիր կործանելու. գիտնալ պէտք է որ Թագաւորի մը դէմ խօսիլը՝ իրեն շատ աւելի կրնայ նստիլ։ Եւ ինչո՞ւ կ՚Թողում որ տակաւին այս մարդը ապրի. որպէս զի ամէն գործքիս մէջ ինձ արգելք ըլլայ։ Բաւական է ալ որչափ որ ապրեցաւ, հերիք է որ զիս օրէ օր բարկացընէ, տամ անոր մահուան վճիռը, պատուիրեմ որ խակոյն գլխատեն զայն . . . ։

(Երիտասարդ վայրենաբար մը կ՚դայնէ։)

Բայց չէ՛, Հայաստանի մէջ անթիւ պաշտպան ունի, որոնք անոր անակնկալ մահը տեսնելով՝ կը-զրգռուին, և գուցէ իմ անզգուշութեանս վնաս մը կ՚հասցընեն։ Աւելին խարդախութեամբ զայն կե-

բակուրի հրաւէրեմ նամակով մը, և այս պարտուոյս մէջ իր կեանքը վերջացնեմ։

(Կ'ԵՐԹԱՅ։)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

(Սմբատ Հ'ՄՊԱՆԷ։)

ՍՄԲԱՏ

Ընդհատ ամէն ազատանք և ազդարարութիւնք. կ'ցաւի սուրբ Հայրապետը՝ որ իւր խրատները ոչի տակ կ'երթան. կ'ցաւիմ և ես՝ որ Արշակ այսպիսի զաւակ մը թողուց, Հայրենիքս թշուառացընող։

Ո՛վ երկինք, միթէ անդառնալի վնաս մը տուած ես Հայաստանի վրայ, որ սանկ բռնաւորներու լուծին տակ ճնշուի։

(Տերենդիանոս և Մուշեղ Հ'ՄՊԱՆԷՆ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ուրախացէր քաջդ Սմբատ, խաղաղութիւն հաստատուեցաւ Թագաւորին և Սրբազանին մէջ։

ՍՄԲԱՏ

Խաղաղութիւն . . . .։

ՄՈՒՇԵՂ

Այո՛, Սրբազանը կերպակուրի հրաւիրուած է, և գուրսը մեծ պատրաստութիւն կ'տեսնուի։

ՍՄԲԱՏ

Երանի թէ այնպէս ըլլար, բայց չ'եմ կարծեր։

(Վաղարշ Հ'ՄՊԱՆԷ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ահա՛ Վաղարշ աւելի աղէկ կրնայ զրուցել մեզ։

ՍՄԲԱՏ

Սրբազանը կերակուրքի հրաւիրուած է Վաղարշ։

ՎԱՂԱՐՇ

Այո՛ Տէր իմ, ես զինքը գացի հրաւիրելու։

ՄՈՒՇԵՂ

Ու պիտի գայ։

ՎԱՂԱՐՇ

Քիչ մը վերջը հոս կ'գտնուի։

ՍՄԲԱՏ

Ուրիշ ոմ հրաւիրուած է սեղանի։

ՎԱՂԱՐՇ

Թադաւորէն և Սրբազանէն զատ՝ ուրիշ մէկը պիտի չ'նստի սեղանը, նոյնպէս և այս սենեկիս մէջ...։

ՍՄԲԱՏ

Ինա՛ ուրեմն Վաղարշ։

(Վաղարշ կ'մեկնի։)

Օ՜ օրապահանե՛ր, հոս դաւադրութիւն մը կայ; դաւադրութիւն... ահ, անօրէն Պապ, վատասիրտ թագաւոր։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Բայց ի՞նչ կ'խօսիս, քա՛ջդ։

ՄՈՒՇԵՂ

Ի՞նչ դաւադրութիւն է այդ։

ՍՄԲԱՏ

Չ՝ասեցէք որ իրենցմէ զատ ուրիշ մարդ պիտի չ՝նստի սեղանը. առանց ուրախութեան մը ժամանակ, պէտք չէր որ իր զօրապետներն ալ սեղանի հրաւիրէր. բայց դաւադրութիւնը երկչոտ է, առանձին տեղեր կ՝փնտռէ։ Թող տուէք զիս զօրապետներ, հոս պիտի ապատեմ ես, հոս անոր դաւաճանութիւնը պիտի խորտակեմ։

ՄՈՒՇԵՂ

Կ՝աղաչեմ քոյդ Սմբատ, կեանքդ վտանգի մէջ մի դներ։

ՍՄԲԱՏ

Սիրտս լցուած է սիրելիդ իմ Մուշեղ, առիւծ ելնէ դէմս չ՝եմ վախնար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ես միթէ կ՝կարծէս դուն՝ որ թագաւորը համարձակի պալատին մէջ այնպիսի անձի մը կեանքը խարդաւանել։

ՍՄԲԱՏ

Կ՝հաւատամ, թող թէ կ՝կարծեմ։

(Վաղուշէ կ՝մտնէ։)

ՎԱՂԱՐՇ

Թագաւորը հոս կ՝ուզայ։

(Վաղուշէ կ՝ելնէ։)

ՄՈՒՇԵՂ

Ելթանք, արիասիրտ Սմբատ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Նրթամ՛նք, եթէ այդ չափ կասկած ունիս՝ քաշ-ուինք տեղ մը, և այս բանիս առջեւն առնելու ճար մը խորհինք։

ՍՄԲԱՏ

Վ՛ատասիրս գայլ։

(Կ՚Երթան։)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

(Գայլ յեռուքը Լուսոյ շէշմը բռնած՝ և Վաղարշ ի՚մտնէն։)

ԳԱՂ

Մեղանը այս սենեկիս մէջ պատրաստէ Վաղարշ։

(Վաղարշ ի՚Ներսէն։)

Պիտի հանդարտիմ ալ անանկ ծանր յանդիմանութիւններ լսելէ. մինչեւ անգամ համարձակեցաւ զիս ակէ եաքը Եկեղեցի երթալէ արգիլել։ Նկ

՝ Ներսէս, եկուր՝ որ քու վերջին ճաշդ ընես, եկուր մահդ հոս քեզի կ՚ապասէ։

(Վաղարշ ի՚մտնէ։)

ՎԱՂԱՐՇ

Տէր իմ՝, Սրբազանը կ՚ուզայ։

ԳԱՂ

Շատ բարի։

(Վաղարշ ի՚Ներսէն։)

Ձեռքերս կ՚դողան, սիրտս կ՚տրտմի, արիութիւն, ահա մտեցար...։

(Ս. Ներսէս։ Հ՝մտնէ։ Վաղարշ հ՝ակի սեղանը պատրաստել։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ի՛նչ ուրախութիւն, ի՛նչ երջանկութիւն, սիրելի թագաւոր։

ՊԱՊ

Ներեցէք ինձ պատուական Հայր, եթէ յանիրաւի շատ անգամ ձեր վերհանձն սիրտը վշտացուցած ունիմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ես արդէն ներեցի։ Բայց ասիկա ինձ զարմանք կ՝պատճառէ, որ ինչպէս Ձեր կիրքը և զայրոյթը քիչ մը ատենուան մէջ այսպիսի հեզութեան փոխուեցաւ։

ՊԱՊ

Այդ բանին վրայ զարմանալ պէտք չէ՛ք Սրբազան Հայր. ասիկայ Աստուծոյ մէկ պանչելիքը կըրնայ սեպուիլ, որ Ձեր վերջին խօսքերը իմ վրաս խրատնկ ազդեցութիւն ըրին։

Ս. ՆԵՐՍԷՍ

Աստուծոյ քով անկարելի բան չ՝կայ։

ՊԱՊ

Երեմն սեղանը պատրաստ է Սրբազան Հայր։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Դեռ կատկածը իմ սրտէս չ՝փարատիր։)

(Սեղանը հ՝նստին։)

ՊԱՊ

Յիրաւի այսօրուան պէս ուրախութիւն շատ քիչ անգամ զգացած եմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Զէ թէ միայն դուք, վեհափառ Տէր, այլ և Հայաստան պիտի ուրախանայ։

(Դուրսէն կ'երգեն։)

Խնդայ երկին
Աստ 'ի վեր ծածանին
Դրօշակք փառաց.
Յարիւն Թարմ սէգ ոսկաց
Փայլք սուսերաց
Ի ջինջ ճաճանչ արեգին
Շողան փայլին.
Խնդայ երկին։

Կացցէ անանց
Այս յիշատակ պերճ փառաց.
Ի սիրտ քաջաց
Քանդակեսցի անմոռաց,
Յորդիս Հայկայ
Եւ փառք վեմ Հայկազանց.
Խնդայ երկին, և այլն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Յաղթութիւնը Հայաստանի փառաւոր յաղթութիւնը կ'յիշէ ու կ'երգէ։

ՊԱՊ

(Յամենակ է։)

(Թոյնը կ'դնէ գաւաթին մէջ գաղտնապէս։)

Սիրուն եզանակ... խմենք Տէր իմ գաւաթ մը գինի այս ուրախութեան վրայ։

(Գինին կ'լցնէ և թոյնը եղած գաւաթը Ներսէսի կ'տայ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Թէ և սովորած չ'եմ, բայց այս ուրախութեան վրայ կ'խմեմ։

(Կ'խմէն։)

Վ.ԷՀԱԻԱՌ ՏԷՐ, այս աշխարհիս վրայ մի միայն մեր գործերուն յիշատակը պիտի մնայ, թէ բարի և թէ չար. բայց հանդերձեալ աշխարհին մէջ անոնց վարձատրութիւնը պիտի ընդունինք, կամ արքայութիւն և կամ դժոխք։

Ի՞նչ վախճան ունեցաւ Արշակ հայրդ. ինքզինքը ըրած չար գործերով առելի ըրաւ, թէ մարդկան և թէ Աստուծոյ. և բանտին մէջ յուսահատութենէ անձնասպանութեան սոսկալի մեղքն ալ գործեց։ Արշակ թագաւորը՝ օրինակ ըլլայ քեզ չարիք չ'գործելու. աղէկ գիտնաս որ չարն անպատիժ չ'մնար, նոյնպէս և բարին առանց վարձատրութեան . . . ։ Բայց ի՞նչ կ'զգամ սրտիս մէջ . . . ։

(Պապ էրէսը կ'դարձնէ և աչքերը կ'գոցէ։)

Ղուռն կ'ուլամ պապ . . . ահ, միտքս կասկած մը կ'ելնայ . . . կարծեմ զիս թաղաւորեցիր . . . ։ Բոլոր կար բաժակիդ մէջ՝ զոր ինձ այնչափ սիրով մատուցիր . . . ։ Ընդունիմ սիրտս, եթէ զիս մեռցնելու դիտաւորութիւն ունէիր, եթէ կ'փափաքէիր որ իմ կեանքս աշխարհիս վրայէն վերցնես, ինչու հրապարակաւ չի մեռուցիր. ոմ զքեզ կ'արգիլէր, ոմ քու անդութ ձեռքերդ կ'բռնէր . . . . ։ Ընդհանրապէս հասար քու բաղձանացդ, ապէց վերջը քու գործերդ յանդիմանող մէկը չ'կայ. գործէ՛ ուզած չարութիւններդ, վասն զի Ներսէսի բերանը քիչ մը վերջը պիտի անշնչանայ . . . . ։

Այս իմ մահուանս վրայ չ'եմ ցաւիր, կ'ներեմ քեզի... բայց կ'ցաւիմ Հայաստանի վրայ, որ քեզի պէս բռնաւորի մը լուծին տակ պիտի ճնշուի. կ'ցաւիմ՝ որ քու անօրէն հօրդ գործած անգթութիւնները պիտի գերազանցես. կ'ցաւիմ՝ որ թշուառ Հայաստանի փառքը վերատին պիտի մարի. կ'ցաւիմ՝ որ Քահանայապետութեան աթոռը Լուսաւորչայ սերունդէն պիտի դատարկուի...։

ՊԱՊ

(Անոր առջեւ ծնկան վրայ գալով) Ներէ՛ ինձ ո՛ պատուական Հայր. թողութիւն տո՛ւր զքեզ սպանողին։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ղուաղէալ) Այս արդէն ներեցի.... ո՛վ Տէր... թողութիւն տո՛ւր զիս սպանողին... պահէ՛ զՀայաստան....։

ՊԱՊ

(Ելնելով) Ի՞նչպէս սոսկալի կերպիւ կ'տիրէ վրան մահուան գեղնութիւնը, ո՛վ անգթութիւն...։

(Պապ ի՛ մեջնէ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Մահ... կ'տեսնեմ քու կերպարանքդ... բայց աւելի ուրախութիւն... քան թէ վախ կը պատճառես ինձ....։ Խե՜ղճ Հայաստան... աչքերս կը մթագնին... մահ, ըն կամ Տէր... զս զի իմ...։

(Կ'մեռնի։)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍՄԲԱՏ, ՄՈՒՀԵՂ, ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ ԵՒ ԳԱՒԱՆ

ՍՄԲԱՏ

Ի՞նչ կ՚սեսնեմ . . . :

ԳԱՒԱՆ

(Դիակին վրայ էյնալով) Ա՜հ, *սուրբ Հայրապետս, դուն մեռա՞ր, Հայաստանի փառքն ալ հետդ առիր . . :*

ՄՈՒՀԵՂ

Ո՛վ, տխո՞ւր օր :

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Զարագուշակ օր :

ՍՄԲԱՏ

Սո՛ւգ առ Արարատ, քու Բարեբարդ մեռա՞ւ, ողբա՛, հեծէ՛, հառաչէ՛, փառքդ և պարծանքդ մարեցաւ . դացին անհետացան այն երջանիկ օրերը, որ քու սուրբ Պաշտպանդ իւր օրհնեալ և Աստուածապարգեւ շունչը կ՚շնչէր . . . :

Ընդէ՞նդ Պապ, թէ և այսպիսի չնաշխարհիկ Անձի մը կեանքը խարդաւանեցիր, բայց անոր անմահ յիշատակը և անունը՝ յաւիտեան կենդանի պիտի մնայ Հայաստանի և Հայ սրտերու մէջ :

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ՚ԳՈՅՈՒ :

Ի ՆԱՊԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԵՆԻՆ

ՎԻՐԳԻՆԻԱ . . .
ՄԻՀՐԴԱՏ . . . } *Ողբերգութիւնք։*

ԳԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ
ՑՈՒԴԻԹ . . . } *Թատերգութիւնք։*

ՎԻՔԹՕՐԻԱ *Անգլիոյ Թագուհւոյն Հայոց Արշակունի Թագաւորներէ սերիլը։* (Մամլոյ յանձնուած է։)

ՆԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այն ողբերգութեան տպագրութեան իրաւունքը մի միայն տրուց Ամիտաց կ'վերաբերի։